

ՈՒՐԱՐՏԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Ա. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Լ. Սի Գոր արձանագրություն և Արինբերդից

Արինբերդը (Ղանլի-թափան) ուրարտական կարեորագույն հուշարձաններից է և արդեն սկսած 1951 թվականից իրավամբ դարձել է սիսականական պեղումների օբյեկտ:

Առանձնապես կարեոր արդյունք տվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ջոկատի պեղումները՝ 1956—57 թվականներին:

1956 թ. հայտնաբերվեց ուրարտական տեքստերում հիշատակվող susi տաճարը¹, իսկ 1957 թվականին՝ E. GAL (= սալատ, բերդ) կառուցվածքը:



Նկ. 1:

Հնագիտական ու ճարտարապետական հետաքրքիր նյութերից բացի, գիտական կարեորագույն արժեք են ներկայացնում այդ շենքերի մուտքերը զարդարող, բազալտի վրա փորագրված սեպագիր արձանագրությունները, որոնք ոչ միայն հարստացնում են ուրարտական արձանագրությունների ժողովածուն, այլև գտնվելով իրենց նախնական տեղում (in situ) հնարավորություն են ընձեռում համեմատաբար լիակատար պատկերացում կազմելու susi և E. GAL ուրարտական կառուցվածքների մասին և հիմք են տալիս ուրարտագիտական, հետևապես նաև հայագիտական նոր հարցադրումներին:

¹ Տե՛ս Մարգարիտ Իսրայելյան, Արինբերդի susi տաճարը և նրա արձանագրությունները, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական բաժանմունք), 1957, № 9, էջ 93—105:

Susi (սուսի) տաճարի մուտքի աջ և ձախ կողմերում հայտնաբերված արձանադրությունները մեր ուսումնասիրությունը պարզեց հետեյալը. susi-ները կառուցվել և նվիրվել են ոչ միայն ուրարտացոց ղեկավար աստված Խալդուն, այլև՝ ուրիշ, անշուշտ նույնպես կառուցողուն աստվածների, տվյալ դեպքում ուրարտական պանթեոնում առաջին անգամ հանդիպող luarsa (կամ lubsa) աստծուն. susi-ն ոչ շատ մեծ, բայց հոյակապ մի շենք է, քառանկյունի հատակագծով (5մ×8 մ.), որմնադարձ պատերով, ներսում նկատելի է նվիրատվության սեղանի հետքը, որին զուգահեռ դռնվում է միակ և սրբատաշ քարերով շարված դեղեցիկ մուտքը. վերջինս փակվել է երկու շրջաներով:

Մեր ենթադրությամբ susi-ները, ըստ երևույթին, ծառայել են վերին (պալատական) խավի ներկայացուցիչներին, ի տարբերություն մասսայական բնույթի լայնարձակ տաճարների¹:

1957 թ. պեղումների հենց առաջին օրերին էր, որ բացվեց մի նոր արձանադրություն.

Պեղումները սկսեցին հուլիսի 27-ին, 1956 թ. պեղած և susi-ին հարակից հարող՝ 5 մուտք ունեցող մեծ սենյակի շարունակության վրա, ուր օգոստոսի 1-ին բացվեց տասը տողից բաղկացած և հիանալի պահպանված սեպագիր արձանադրությունը.

Նույնով պարզվեց, որ արձանադրված քարը դռնվում է մի բնդարձակ դարպասի (2,35 մ. լայն.) ձախ կողմում, մուտքի տուֆաբար շարվածքի կենտրոնում:

Արձանադրությունը փորագրված

է բաղադրի վրա. ընդհանուր քարից դուրս դռնված ու հղկված մակերեսը կազմում է 54սմ×33 սմ: Արձանադրված մասը տողատված է, բայց աջ և ձախ կողմերից սահմանադրված չէ. այս հանգամանքը նշում են հատկապես այն պատճառով, որ դա հնարավորություն է տալիս դիտելու որոշ սկզբունքային տարբերություններ մեզ վաղուց հայտնի ուրարտական արձանադրված շինարարական քարերի նախնական տեղը որոշելու համար:

Այժմ արդեն վստահ կարելի է ասել, որ այն քարերը, որոնց փորագրված մասը դուրս է ցցված քարի ընդհանուր մակերեսից, գտնվել են տուֆաբար շարվածքում. վերջինը, անշուշտ, ձեռնված է եղել և այդպիսով՝ ընդհանուր հարթ ֆոնի վրա քարի հղկված եզրերը արձանադրության համար ինքնին հանդիսացել են սահմանադրեր: Իսկ ըլոթր կողմերից տաշված շինարարական այն քարերը, որոնց վրայի արձանադրությունները քարի ընդհանուր մակերեսի աջ ու ձախ կողմերից անջատվում են միայն սահմանադրերով, ինչպես susi-ի մուտքի քարերը, պետք է ենթադրել, որ նման տաշվածքի ուրիշ քարերի հետ կազմել են մի ընդհանուր ճարտարապետական ամբողջություն². Նույնատիպ վիմադրերը, ինչպես ցույց են տալիս Արինբերդի մեր պեղումները, հավանաբար պատկանել են, թեև կարևոր, բայց անհամեմատ ավելի փոքր ծավալի շենքերի:

Ուրարտական այս արձանադրությունները, բացի կառուցման փաստը նշելուց, կատարել են նաև զարդարանքի դեր և զարդարել են կարևոր շենքերի մուտքերը համաչա-




Նկ. 2:

¹ Susi-ի և նրա հետ կապված հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս մեր վերոհիշյալ հոդվածը:

² Համեմատի՛ր susi-ի մուտքը E. GAL-ի մուտքի հետ (նկ. նկ. 1 և 2):

Պետք է ենթադրել, ուրեմն, որ 1950 թ. ոչ իրենց նախնական տեղում գտնված Արինբերդի երկու սեպագրերը նույնպես զարդարել են խոշոր շենքերի տուֆաբար մուտքերը:



Նկ. 3:

փորեն (սիմեարիկ ձևով), ինչ մասամբ նախապես կարելի էր կոահել ուրարտական միանման արձանագրությունների առկայությունից:

Արինրիդի պեղումները լիովին հիմնավորում են նման կոահելը. ինչպես արդեն հայտնի է, susi-ի մուտքը դարգարված է միևնույն բովանդակության արձանագրություններով: É. GAL-ի մուտքը կաղժոզ աջ պատին սպասվող արձանագրությունը թևեղտնվեց. սակայն նրա տեղը որոշակի նկատելի է և մենք գեո հույս ունենք, որ հետագա պեղումների բնթացքում մի այլ տեղում կգտնվի այն: Կասկածից վեր է, որ այդ արձանագրությունը իր չափով, ձևով ու տեքստով լինելու է ձախ կողմում հայտնաբերված արձանագրության կրկնություն:

Նորագյուտ այս արձանագրության բովանդակությունը հետևյալն է (Նկ. 3).

uHal-di-ni-ni al-su-št-ni
 'Ar-gi-i-iš-ti-i-še
 'Me-i-nu-u-a-hi-ni-še
 i-ni É. GAL ba-du-si-e
 si-i-di-i-is-tu-u-ni
 uHal-di-ni-ni al-su-ši-ni
 'Ar-gi-iš-ti-ni 'Me-nu-a-hi
 LU'GÁL DAN.NU LUGÁL al-su-u-i-ni
 LUGÁL ^{KUR}Bi-i-a-i-na-u-e
 a-lu-si ^{URU}Tu-us-pa-e URU.

Թարգմանությունը կլինի՝

Խալդյան մեծու թյամբ՝
 Արգիշտին,
 Մենուայի (որդին)
 Այս É. GAL-ը հռաեապ
 Լաուցեց:
 Խալդյան մեծու թյամբ
 Արգիշտին Մենուայի

բազավոր¹ (է) հզոր, բազավոր՝ մեծ,
բազավոր Բիայնայի (= բիայնացոյ),
տեբբ Տուշպա բազար (ի)։

Ինչպես տեսնում ենք արձանագրությունը իր բովանդակությամբ կարծես թե նոր բան չի առում, սակայն E. GAL շինարարական տերմինի ուղղորդի քննությունը հետաքրքիրի գաղաղություններն առիթ է տալիս:

E. GAL կոռուցվածքը հիշատակում են ուրարտական մի շարք արևանայություններ, իսկ այդ զագահության պատճառով ստորաբաժնի թարգմանվել ու թարգմանվում է պալատ, բերդ խմաստներով:

Լերիններդի հետագա պեղումները տվելի մանրամասնորեն կպարզեն E. GAL-ի իրական թուփազանցությունը, բայց այս տարվա (1937) նյութը արդեն հնարավորություն է տալիս անհամեմատ ավելի կոնկրետ պատկերացում ունենալու ուրարտական E. GAL-ի մասին:

Նոր արձանագրություն՝ ինչպես տեսանք, հաղորդում է «այս E. GAL»-ի կա-
ուուցման վաւստք. պարզ է, որ հենց այդ շնորքը, որի մուտքը զարգարում է մեր արձա-
նագրությունը, է՛ ուրարտական E. GAL-ը: Պնդումները առայժմ պարզից են հետևյալը:
մուտքը, որի լայնությունն է 2,35 մետր, 7 աստիճանով տանում է մի ընդարձակ նա-
խասրահ, ուր մուտքիցի մոտ, աջ կողմում գտնվում է, բաւ երեւոյթիւն, պահպանողներ:

Այս արահել զուրս է զալիս մի լայնարձակ հրապարակ (10 մ.×16,5 մ.), որի սահմանափակող երեք կողմերում, հավանաբար եղել են առանձին սենյակներ²: Հրապարակի շրջորդող (արևմտյան) կողմում է գտնվում 1936 թ. բացված SUSI տաճարը, ուր, ինչպես նշեցինք, անկասկած պաշտամունքային ծեսեր է կատարել պալատական վերնախավը: Բերմեն E. GAL է կոչվել այս ընդարձակ, մանր խճաքառով սալահատակված ու սյունադրող հրապարակը³ իր սենյակներով(?) և ներսում գտնվող համեմատաբար փոքր, բայց հոյակապ տաճարով:

Մեր պեղումների տված այս հետաքրքիր փաստից ենթևոյ, պետք է ենթադրել, որ սա պալատական շէնք է, և այս գեղարւմ E. GAL-ը նշանակում է պալատ³: Ուրեմն մեր նոր արձանագրութիւնը հաղորդում է պալատական շէնքի կառուցումը:

Նյութերը, սակայն, ցույց են տալիս, որ E. GAL զագափարագիրը ուղարտերենում կիրառվել է նաև բնիլ իմաստով:

Ինչպես հայտնի է, 1930 թ. նույն Լիբիերիցից հայտնաբերված արձանագրու-
թյուններից մեկը նույն է մի E. GAL-ի կառուցում, որը Լիբիշտին կոչում է URU Er-
buni=(քաղաք) էրբունի:

Պարզ է, որ մեր նկարագրած շենքը հաղիվ թև քաղաք կոչվեւ ե հետո՝ Արդիւտին չէր կարող քաղաքի մեջ քաղաք կառուցել, բերրի մեջ՝ բերդ, կամ՝ պալատի մեջ պալատ։ Պետք է ենթադրել, ուրեմն, որ քաղաք կոչվող E. GAL-ը շատ ավելի լայն բովանդակու- թյուն ունի, բան՝ որեւ պալատական շենք ե ըստ այդմ, շատ ավելի խոշոր կառուցվածք է, քան պեկված E. GAL-ը (=պալատը)։

Դժբարևաբար, վերոհիշյալ արձանագրության նախնական տեղը անորոշ է՝ հավանաբար այն դարձրաբեկ է էրբուռնի || էրբուռնի (=էրբվան), ըրեղ-թաղաթի զխափոր մուս-

¹ 11.5 և հաջորդ ընդգծված բառերը ընկալուով արտահայտված են գաղափարագրերով:

² Սենյակների պեղումը ավարտված չէ, որոշակի են զոները, սրունք, զեռեւ պարզ չէ, թե զեպի ինչ նպատակի շենքեր պիտի առաջնորդեն մեզ:

⁸ Բառացի՝ արուն մեծ:

⁴ Տե՛ս մեր հոգվածը՝ Ուրարտական երկու նոր արձանագրություն, հայկական ՍՍՌ-ի Հեղեկագիր (Հասարակական գիտութ.), 1951, № 8, էջ 89 և հտ.:

Տ 1930 թ. երկու արձանագրությունների նախնարերման տեղը մոտավորապես նախընկնում է այն վայրին, ուր ենթադրվում է բերդ տանող գլխավոր մուտքը. տե՛ս *К. Оганесян, Арин-берд (Ганли-тапа)*—урартская крепость города Ирпуни, *Տեղեկագիր (Հաս. գիտ.)*, 1951, № 8, էջ 80:

քը. թերևս հետագա պեղումները երևան հանեն իր իսկ տեղում այդ արձանագրության քերկրորդ օրինակը¹.

Վերոհիշյալ նյութերը թույլ են տալիս ճիշտ համարելու E. GAL զաղափարագրի և՛ պալատ, և՛ բերդ թարգմանությունները, որոնք մինչև այսօր ավելի վերացական ընդլայն են կրել. Արինբերդի պեղումների շնորհիվ նրանք հետզհետե մարմնավորվում են և դառնում շոշափելի: Մեր կարծիքով, բոլոր այն զեղքերում, երբ E. GAL-ը կոչվում է քաղաք, կամ՝ կովով զրավվող ամրություն (agununi manu gunusaa haubi), պետք է թարգմանել բերդ իմաստով:

Արդեն Գ. Մելիքիշվիլին նշել է այն փաստը, որ ուրարտական տեքստերում E. GAL-ը հանդիպում է երկու տարբեր հնչյունական վերջավորությամբ (-ria և -(a)sili)², և ենթադրում է, որ E. GAL-ի տակ ուրարտացիք, ուստ երևույթին, զրել են երկու տարբեր բառ, երկու տարբեր բովանդակություն:

Այս ենթադրությունը, ինչպես տեսնում ենք, լիովին հաստատվում է Արինբերդի պեղումներով:

Այսպիսով՝ ի տարբերություն Կարմիր-բլուրի, Արինբերդը թեև հնադիտական առումով, հատկապես ուրարտական արվեստի ընդհանրապես առաջիմ քիչ նյութ է տալիս³, բայց զրա փոխարեն հարուստ է մոնումենտալ շենքերով ու զրանց անհրաժեշտ ճարտարապետական մասը կազմող շինարարական ընդլայնի վիճակի արձանագրություններով:

Իացի այդ՝ Արինբերդը, հատկապես հայադիտական առումով անհամեմատ ավելի խոշոր արժեք է ներկայացնում, քան այդ կարելի էր ենթադրել նախքան պեղումները:

Եթե Կարմիր-բլուրը հրդեհի հետևանքով միանգամից ավերվել է և ուրարտական կուլտուրայի մնացորդները պահել իր ընդերքում զրեթե անաղարտ, ապա Արինբերդը, ինչպես ցույց են տալիս պեղման արդյունքները⁴, կանգուն է եղել երկար ժամանակ, համեմատյալ դեպ, մինչև մ. թ. ա. V դարը՝ և, ուրեմն, կազմում է ուսումնասիրության կարևոր մի նոր ու հետաքրքիր կամուրջ ուրարտական և վաղ հայկական կուլտուրաների միջև:

Կարմիր-բլուրի ու Արինբերդի պեղումները շարունակվում են և նորանոր հույսեր ներշնչում մասնագիտական աշխարհին:

2. SAL-tu-(u)-bi բայաձևի մեկնաբանումը

SALtutubi բայաձևը կիրառված է միայն մի անգամ՝ Աղամխանի արձանագրության⁵ 6-րդ տողում և առիթ է տվել տարբեր զատողությունների⁶:

¹ Այդ մուտքը անպայման եղել է տուֆաշար, երկու կողմից (ներսից դեմ առ դեմ) միանման արձանագրություններով զարգարված և, ըստ երևույթին, ավելի լայն, քան մեր E. GAL-ի մուտքը, քանի որ այս արձանագրության քարը ավելի մեծ է (69սմ×38սմ), քան բացված E. GAL-ի նոր արձանագրությունը:

² St'ya „Вестник древней истории“, 1954, № 1, էջ 184, E. GAL զաղափարագիրը: Այսուհետև ВДИ, № արձանագրություն: Ելնելով տեքստից (E. GAL^{MEs}-ria agununi manu gunusa haubi=բերդի ամրացված կովով զրավեցի), մեզ թվում է թե՛ բերդ բառը ուրարտերենում ունեցել է -ria վերջավորությունը, իսկ պալատը՝ -(a)sili:

³ Ավելորդ չենք համարում նշել, որ 1957 թ. ամառը Նոր-Արեշի զերեզմանատան մոտ, կոլտնտեսության կալը վարելիս պատահաբար հայտնաբերված, ըստ երևույթին, ուրարտական թագումների խիստ արժեքավոր նյութերը անշուշտ կապ ունեն Արինբերդի պատմության ու կուլտուրայի հետ:

⁴ Ուշ ժամանակի (հատկապես Աբեմենյան Հայաստանի) վերանորոգումները, կառուցումները, ուղղումները, նևտի ծայրերը, խեցեղենը և մանավանդ մ. թ. ա. V դարի միլիթյան երկու արծաթե զրամը (տե՛ս «Սովետական Հայաստան» ժուռնալ, 1957, № 9, էջ 16), պարզ ապացույց են Արինբերդի երկարակեցության:

⁵ St'ya ВДИ, 1953, № 160 արձանագրություն:

⁶ Սեյս, JRS, XX, 1, էջ 20, LIII արձանագրություն, Գր. ՂափանցյաՆ, Ուրարտուի պատմություն, 1910, էջ 187, Գ. Մերեբիլի, Урартские памятники Музея Грузии, 1939, էջ 60, ծնթ. 4, և ուրիշներ:

եղած բացատրությունները, սակայն, կամ թերի են, կամ՝ անհամոզիչ. մեր կարծիքով բայաձևի սխալ ըմբռնման հետևանքով է, որ SALlutubi բառը որպես ասանձին լատիմաստ բացակայում է սլոնի. Գ. Մելիքիշվիլու կազմած բառարանում:

Գ. Մելիքիշվիլու ենթադրությունը, թե SALlutubi-ն SAL lutu¹ parubi=«կին (կանացի) բռնի (տարա)» արտահայտության համառոտագրությունն է², լեզվաբանորեն ոչ մի կերպ չի հիմնավորվում: Անշուշտ ճիշտ է, որ ուրարտերենում նկատելի են համառոտագրության դեպքեր, սակայն ընդհանուր լեզվական մտածողությամբ անհնարին է բառի այնպիսի համառոտագրում, որ բառարմատից (ավյալ գեպում՝ paru-) ոչ մի տարր չպահպանվի և մնա միայն զեմքն ու թիվը արտահայտող բայածանցը (-bi), որը ոչ մի կերպ չի նշում բառիմաստը³:

Նման պատկեր կարող է ստացվել միայն լեզվաբանական որոշ օրինաչափությունների հետևանքով:

Մեր կարծիքով SALlutubi բայաձևը ճիշտ ըմբռնելուն մեծապես օգնում է հենց հիշյալ արձանագրության համապատասխան տողերի (a—6) շարադասությունը:

¹Si-na-li-bi-ni LUGÁL UKUMES -ra-ni SALlu-tu-bi

Մոտավորապես նման միտք են արտահայտում, անշուշտ, հետևյալ երեք զեպերը, որ սակայն SALlutubi բայաձևին փոխարինում է uediadubi բայը:

- 1) IV LUGÁLMES (4 թագավորների) uediadubi.
- 2) LUGAL KURLusae (թագավորին Լուշա երկրի) uediadubi.
- 3) ¹Basatēni uediadubi⁴.

Վերջին բայաձևը թեև հարցականով, բայց իրավամբ Գ. Մելիքիշվիլին թարգմանում է «ամորձատել, ներքինացել» իմաստով:

Հայտնի է, որ uedia բառը lutu բառի հոմանիշն է (synonym) և նշանակում է կին, իսկ du- բայարմատը՝ աճել, դարձնել, ուրեմն uedia-dubi բառացի կնշանակի՝ «կին արեցի || դարձրի»։ Մեր համոզմունքով նույն իմաստն է արտահայտում նաև SALlutubi ձևը, որն անշուշտ կազմվել է uediadubi բայի ձևով՝ SALlutu dubi հետադարձում առնմանության (ասիմիլյացիայի) օրենքով du-ն նախորդ tu-ի ազդեցությամբ փոխվել է tu-ի և ապա երկու tu-երից մեկը, հաջորդողիայի օրենքի համաձայն, սղվել է⁵: Ի վերջո, ստացվել է մեզ հասած ձևը՝ SALlutubi, որ ուրեմն, կնշանակի՝ «կին դարձրի»։ SAL որոշիչը (գետերմիմատիվը) պարզ վկայում է, որ նախապես այդ իմաստը արտահայտվել է SALlutu dubi ձևով:

Մեր այս մեկնաբանումը իրավունք է տալիս uediadubi (նաև SALlutubi) բառը թարգմանել՝ «կին դարձրի» || ներքինացրի»՝ առանց հարցականի:

Գ. Մելիքիշվիլու SALlutu (pa-ru-)bi գրությունը, ուրեմն, չի կարելի ընդունել, մանավանդ որ parubi (—բռնի, տարա) բառը նման կազակցություններում սովորաբար չի հանդիպում:

Մեր կարծիքով Ֆղամխանի արձանագրության հիշյալ տողերի ճշգրիտ թարգմանությունը կլինի՝

«Ծինալիրին, Բազավորին (այդ) ցեղերի || ժողովրդյան⁶ ներքինացրի»:

¹ SALlutu=կին ըստարմատը հաճախ է հանդիպում ռազմական տեքստերում:

² ВДИ, № 160, ծնթ. 1:

³ Հենց Գ. Մելիքիշվիլու նշած փաստը՝ Lütarsuatut-i բառը համառոտագրվում է Luta ù tuhi կամ՝ Luta tuhi ձևով:

⁴ St'u ВДИ, № 128, В 1, տող 15, 39, № 156, տող 14:

⁵ Յսի իմաստով էլ ճշմարտությանը ավելի մոտ է Սեյսի բացատրությունը, ըստ որի երկու tu-ից մեկը վրիպել է փոքրորդի ուղղորդությունից:

⁶ St'u ВДИ, № 160, ծան. 1, 4, 5: Դստ Գ. Մելիքիշվիլու՝ «Буквально: „мужчин (употреблена идеограмма „народ“) (и) женщин“»:

ЗАМЕТКИ ПО ВОПРОСАМ УРАРТОВЕДЕНИЯ

М. А. ИСРАЕЛЯН

(Р е з ю м е)

В первой заметке автор говорит о новой надписи, обнаруженной при раскопках Аринберда, во второй -- об интерпретации одной урартской глагольной формы.

Новая надпись из Аринберда

Раскопки Аринберда обнаружили в 1957 г. еще одну новую клинописную надпись, которая находилась на стене, примыкавшей к воротам с левой стороны. На другой стене, примыкавшей к воротам с правой стороны, явно видно место другой надписи, которая не сохранилась.

Вновь найденная надпись высечена на базальтовом камне и содержит 10 строк. Она принадлежит урартскому царю Аргишти I и гласит о сооружении Ё. GAL-а.

Как известно, в 1950 г. в Аринберде была обнаружена другая надпись Аргишти I, в которой также говорится о сооружении Ё. GAL-а. Последний назван городом Эр(е)буни (> Эр(е)вунни > Эреван).

Ясно, что в этих двух разных случаях вряд ли возможно Е. GAL переводить одним и тем же словом -- дворец или крепость. Скорее можно предположить, что Аргишти не мог соорудить дворец во дворце, крепость в крепости или город в городе.

Кроме того, как показывают раскопки, новооткрытый Е. GAL не мог называться крепостью или городом.

Новая надпись (и другие подобные надписи) говорят, по всей вероятности, о сооружении дворцового типа, на западной стороне площади (19×16,5 м) которого стоит раскопанный в 1950 г. царский храм susi (40 кв. м). А во всех тех случаях, когда Е. GAL называется городом, надо, видимо, Ё. GAL переводить только словом *крепость* (город-крепость).

Интерпретация глагольной формы SALlutubi

По нашему глубокому убеждению, SALlutubi образовался таким же путем, как глагол uedia-dubi (женщиной сделал), который встречается в трех случаях приблизительно в подобных контекстах.

Ясно только, что SALlutubi протерпел следующее чередование звуков: SALlutu-dubi > SALlututubi > SALlutubi.

SALlutubi не только по форме, но и по смыслу тождествен с глаголом uedia-dubi «женщиной сделал (я), оскотил».

Следовательно, мы не согласны с переводом Г. Меликишвили («Вестник древней истории», 1953, № 4, надпись № 160). 5-6-ю строки Адамханской надписи следует читать так:

«Циналиби, царя (этих) племен я народа оскотил (я)».